

<Մասնագիտական դասընթաց Մարտունիում>, <Ազատ Արցախ>, N106 առ
28.09.2013թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՄԱՐՏՈՒՆՈՒՄ

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ք. Մարտունի

Սեպտեմբերի 11-ին, Մարտունու մշակույթի և երիտասարդության կենտրոնում, շրջկենտրոնի, Մաճկալաշենի, Ղ. Ճարտարի, Ճարտարի, Վազգենաշենի և Գիշու համայնքների ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպվեց մասնագիտական դասընթաց, որին մասնակցում էին դիմում ներկայացրած շուրջ 79 քաղաքացի:

Դասընթացի անցկացման համար շրջկենտրոն էին ժամանել ԼՂՀ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը, տեղակալ Եղիշե Արզումանյանը, քարտուղար Ռայա Նազարյանը: Ներկա էր նաև Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Հայկ Պետրոսյանը: Դասընթացը, որը վարեց Սրբուհի Արզումանյանը, ընթացավ երեք փուլով՝ ընտրական գործընթացի վերաբերյալ բացատրական աշխատանք, տեսահոլովակի դիտում և ստուգարքի ընդունում:

Բացելով դասընթացը՝ Ս. Արզումանյանը հայտնեց, որ այցի նպատակը դասընթացի կազմակերպման պրակտիկայում հանդիպող որոշակի բացերի շտկումն ու գործող ընթացակարգերի կատարելագործումն է, 2013թ. հոկտեմբերի 13-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հետագա երեք տարիների ընթացքում կայանալիք ընտրությունների նախապատրաստական աշխատանքները կազմակերպված իրականացնելը:

Ս. Արզումանյանը ներկայացրեց ընտրական գործընթացի վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դիրքորոշումները:

-Ընտրական գործընթացում ամենակարևոր խնդիրը բոլորիս համար պետք է լինի մեր հասարակության մեջ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանումը: Օրինաչափ է, որ առանձնապես մրցակցային ընտրությունների ժամանակ բնակչության շրջանում մթնոլորտի ակտիվացում արձանագրվի: Մակայն դա պետք է տեղի ունենա միայն ու միայն առողջ շփումների ձևով, զերծ կոնֆլիկտներից: Բիարկե, ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներն այս գիտակցումով պետք է մոտենան ցանկացած ընտրության ու առաջին հերթին, բացի թեկնածուներից ու նրանց մտերիներից, այստեղ անելիքներ ունենք՝ մենք՝ ընտրական եռաստիճան համակարգի բոլոր հանձնաժողովականներս, այն է՝ լավագույնս տիրապետել ընտրությունների կազմակերպման թե՛ իրավական և թե՛ տեխնիկական առանձնահատկություններին, և դրանք կիրառել պրակտիկայում,- ասաց բանախոսը: ԿԸՀ նախագահը դասընթացի մասնակիցներին հիշեցրեց, թե որ դեպքում քաղաքացին իրավունք ունի և որ դեպքում իրավունք չունի մասնակցելու ընտրություններին, ովքեր իրավունք ունեն հանդես գալու վստահված անձանց և դիտորդների դերում: Ս. Արզումանյանը խոսեց քվեարկության գաղտնիության ապահովման անհրաժեշտության, ընտրացուցակների, ընտրական հանձնաժողովների կազմավորման հիմունքների, ժամկետների, նախընտրական քարոզչության, ինչպես նաև վստահված անձանց, դիտորդների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների կարգավիճակի, իրավունքների, պարտականությունների և

գործունեության երաշխիքների շուրջ:

Ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար ԼՂՀ շրջաններում մասնագիտական դասընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացրեց ԿԸՀ նախագահի տեղակալ Ե.

Արզումանյանը: Նրա տեղեկատվությամբ՝ մասնագիտական դասընթացները կանցկացվեն երկու փուլով, որի ուղղությամբ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից զգալի աշխատանք է տարվում:

Խոսվեց տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տարածքային ընտրական հանձնաժողովների կազմավորման կարգի, հանձնաժողովի անդամների լիազորությունների մասին:

Տարածքային ընտրական հանձնաժողովում քվեարկության կազմակերպման, նախապատրաստման, քվեաթերթիկների, ընտրական հանձնաժողովների կնիքների, քվեատուփի, ձերբակալվածների և կալանքի տակ գտնվող քաղաքացիների քվեարկության կազմակերպման և հարակից հարցերի շուրջ պարզաբանումներ տվեց ԿԸՀ քարտուղար Ռ.

Նազարյանը: Ըստ նրա՝ մի փոքր բացթողումը կարող է հանգեցնել մեծ խնդիրների:

Դասընթացի երկրորդ փուլում ընտրական գործընթացի վերաբերյալ ցուցադրվեց տեսահոլովակ, որում ընտրական ողջ գործընթացը ճիշտ ու պատշաճ մակարդակով կազմակերպելուց բացի կարևորվեց նաև ուստիկանության հետ ընտրական

հանձնաժողովների սերտ համագործակցության, ընտրացուցակների ճշտման, քվեարկության օրը հասարակական կարգի ապահովման անհրաժեշտությունը:

Երրորդ փուլում կազմակերպվեց ստուգարք, որ հանձնեցին 73 քաղաքացի, ովքեր կստանան ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունքի վկայականներ:

Ամփոփելով ստուգարքի արդյունքները՝ ԼՂՀ ԿԸՀ նախագահը նշեց, որ մասնագիտական դասընթացը ծառայել է իր նպատակին:

http://artsakhtert.com/arm/index.php?option=com_content&view=article&id=5459:2013-08-16-12-33-12&catid=10:2012-02-08-11-40-24&Itemid=24